ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀայաստանիՀանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 65-Ա

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, ավագանին որոշում է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -5

1. ԲԱՅՐԱՄՅԱՆ ՎԱՂԱՐՇ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴԳԱՐ
3. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. . ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿՈՄԻՏԱՍ ԷԼԼԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք

sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 66-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<Տեղական ինքնակառավարման մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետով և <Տեղական տուրքերի և վճարների մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ,8-րդ,9-րդ,10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով.համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի վարչական տարածքում 2019թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, նորշենքերի, շինությունների/ներառյալ ոչ հիմնական/շինարարության/ տեղադրման/թույլտվության համար տեղականտուրք սահմանել

հիմնական օբյեկտների համար

1/մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/տների,ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝5000/ հինգ հազար/դրամ,

2/մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000/հազար/դրամ,

3/20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական, այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել.

1/ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ,

2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել.

1/հեղուկվառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիք տարվա համար՝ 150000/հարյուր հիսուն հազար/դրամ,

2/համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվահամար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 1քմ՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

5.Տեղական վճարների տեսակները

1/Համայնքի տարածքում շինարարության կամ արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000/հազար/դրամ:

2/Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվողհողերը հատկացնելու,ետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նմանաշխատանքների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500/հինգ հարյուր/դրամ:

3/Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 2000/երկու հազար/դրամ:

6.Աղբահանության համար
1/Մեկ շնչին ընկնող վարձավճարի չափը սահմանել ամսեկան 100 դրամ:
2/Համայնքի վարչական տարածքում առևտրի,հանրային սննդի օբյեկտների իրավաբանական անձանց 1քմ-ի համար սահմանել ամսեկան 35 դրամ:
3/Համայնքի վարչական տարածքում արտադրական օբյեկտների իրավաբանական անձանց 1քմ-ի համար սահմանել ամսեկան 6 դրամ:
4/համայնքի վարչական տարածքում կրթական օջախների իրավաբանական անձանց 1քմ-ի համար սահմանել ամսեկան 3 դրամ:

7.Ծնողական գանձումներ

1/Մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի ամսեկան վարձավճարը սահմանել ամսեկան 4000 դրամ:

8.Ուժը կորցրած ճանաչել Սարիգյուղ համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 23-ի <Սարիգյուղ համայնքի տարածքում 2018թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>թիվ 56-Ն որոշումը:

9.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՅՐԱՄՅԱՆ ՎԱՂԱՐՇ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴԳԱՐ
3. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿՈՄԻՏԱՍ ԷԼԼԱՐՅԱՆ

ՍԱՐԻԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 07600904